

ԱՐԴԱՎԱՐԱՐ
ԿՅԱՆՔԻ ՀԱՄԱՐ


ԴՈՑԵԼՏ Ա. Ս. ԲՐՈԴՍԿԻՑ

ՎԵՐՓԵՐ

ՅԵՎ

ԱՌԱՋԻՆ

ՈԳՆՈՒԹՅՈՒՆԸ



ԱԶԴ-ԱՎՃԱՎԵՐՆԵ ՅԵՐԿՐՈՒՆ ՀՐԱՄԱՆԱԳՈՒՔ 1936

ԱՐԵՎԱԿ Ա.Ի.ՈՂՋ ԿՅԱՆՔԻ ՀԱՄԱՐ

614.88

P-91

Դոցենտ Ա. Ա. ԲՐՈԴՍԿԻՑ

Տըսվմատողովիայի և արյան փոխ-
ներաբկման Աղով-Աւետովյան յեր-
կրային գիտահետազոտական
ինստիտուտ

ՎԵՐՓԵՐ

ՅԵՎ ԱՌԱՋԻՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆԸ

227

6148
5-88

Պատմ. Հ. Բ. Ա.ՊԱԼԿՈՎԻ
Խմբագրությամբ

ԱԶՈՎ-ՍԵՎՏՈՎՅԱՆ ՅԵՐԿՐԱՑԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՅՈՒԹՅՈՒՆ

Օպուտով-Դյոն - 1936

06.03.2013:

3979

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

Ինչ և վերքը	3
Ինչպիսի վերքեր են լինում	6
Վերքի ընդհանուր հատկանիշները	16
Վերքերից՝ որդանիզմին սպառնացող վտանգ-	
ները	22
Ինչպես կանխել վերքի փարակման վտանգը .	37
Վերքի լավացումը	42
Վերքերի բուժումը	45



3665
41

Отв. ред. Г. А. Потенц.

Пом. техред. Д. М. Джинибалаян

Издание 555|4825. Об'ем 17½ печ. листа. (33280 зн. в 1 п. л.)
Статтормат А6—105x148. Упакрайлит 00-11446. Тираж 1000 экз. Заказ
5773. Сдано в набор 14-XII-1935 г. Подписано в печать 31-XII-1935 г


Типография им. Стаски 1902 года г, Ростов на Дону.

ԻՆՉ Ե ՎԵՐՔԸ

Այն բոլոր ֆիսավածքները, վորոնք խախ-
տում են մարդու և կենդանու ծածկույթ-
ների ամբողջությունը, կոչվում են վերբեր:
Կան ֆիսավածքներ, վորոնց հետ միաժամա-
նակ վերքեր են առաջանում, կան ել այն-
պիսի ֆիսավածքներ, վորոնք վերք չունեն:
Որինակ, յեթե մարդ սառույցի վրա ընկնե-
լիս՝ կոտրում է ձեռքը կամ վոտքը, և այդ
գեղքում նրա մաշկը (մաշկային ծածկույթը)
մնում է անֆիսա, այլ ջարդված են միայն փա-
փուկ հյուսվածքների մեջ պարփակված վո-
կորները, — նշանակում են նա վոսկը կոտր-
վածք ե ստացել, բայց վերք չունի: Իսկ յեթե
ընկնելիս նրա կոտրված վոսկը ծայրը դուրս
ցցվի, յենթամաշկային հյուսվածքը կամ

մկանը յերեվա, — նշանակում եւ մենք գործ ունենք վերքի հետ:

Սակայն մարդկային որդանիզմն այնպես եւ կազմված, վոր միայն մարմնի յերեսը չեւ



Նկ. 1. Մաշկի տեսքը՝ մանրադիտակալ նայելիք:
1—մաշկային եղիթելը. 2—շաբակցական հյուսվածքը և առաձգական մանրաթելերը Ա. 3—մարպային հյուսվածքը. Ե—մաշկի մազը. Յ—քրտնքի գեղձերի արտահանող ծորանի անցքը.

վոր պատաճ եւ մաշկային ծածկույթով: Մաշկային ծածկույթը կազմված եւ միքանի շերտերից՝ 1—հատուկ բջիջներից (այսպես


կոչված եպիթելը), վորոնք շարված են իրար վրա, 2—շաբակցական հյուսվածքային հիմքից, վոր բաղկացած եւ բջիջներից, մանրաթելերից և ճարպային աստաղից:

Մարդու ներքին որդանները (վորկորը, փորոտիքը, կոկորդը, ստամոքսը, միզափամփուշտը, վորովայնի խոռոչը և այլն) նույնպես սւնեն իրենց ծածկույթները, վորոնք բաղկացած են լորձային (վորկորը, ստամոքսը) կամ այնպես կոչված շիճուկային (պլեվրային խոռոչը, վորովայնի խոռոչը) թաղանթներից:

Այսպիսով, ծածկույթներ գոյություն ունեն ինչպես մարդու մարմնի յերեսին, այնպես ել մարմնի ներսում: Ահա ինչու վերքեր են կոչվում նաև այն մնասվածքները, վոր առաջանում են ներքին այլևայլ որդանների խեղսամերի դեպքում, յերբ նրանց ծածկույթները մնասված են լինում, բայց մաշկը մնացել եւ անվնաս: Յերբ մարդ փորով ընկնի գերանի վրա, կարող եւ նրա լյարդը վիրավորվել. յերբ մարդ ճիլվի վագոնների բուֆերներով, կարող եւ տեղի ունենալ կողերի կուրպածքը և պատճառել պլեվրայի վերք: յերբ յեզը սմբակներով լսի վորին, վիրավորվում եւ աղիքը:

ԻՆՉՈՒՄԻ ՎԵՐՔԵՐ ԵՆ ԼԻՆՈՒՄ

Վերքերը տարբերվում են (կամ, ինչպես ասում են, ստորաբաժանվում են) ըստ իրենց տեսակի, ըստ այն գործիքի, վորով հասցված ե վերքը, ըստ ծաղման, ըստ իրենց ընթացքի և ըստ այն բարդությունների, վորոնք առաջանում են յերեքն առողջացման ընթացքում:



Նկ. 2. Ծղկել կարգածի վերքը՝ Վերքի բերանն աննշան ե-

Ամենից հաճախ պատահում են կտրածի վերքեր (տես նկ. 2): Դրանք ծածկույթի այն ֆսասվածքներն են, վոր առաջանում են դանակով, ածելիով, ապակիով և այլն կտրելուց: Նման վերքերի մեծ մասի յերկայնն է այնքանությունը գերազանցում ե լայնքին: Խորությունը լինում ե տարբեր: Վերքի-


յեղբերը հարթ են: Վորքան սուր լինի կըտ: Բածի վերք պատճառող առարկան, այնքան հարթ են լինում վերքի յեղբերը:

Ցեթե վերք պատճառող գործիքը (դանակ, թրւը, կացին և այլն) ամբողջ ուժով հարգածել ե մարմիկ մի վորոշ տեղամասը, այդ դեպքում առաջանում են կտրածի վերքեր: Նրանք յերեքն շատ նման են կտրածի վերգերին: Տարբերությունը միայն այն ե, վոր սրանց յեղբերն ավելի յեն ֆսասված, ավելի խոր են, յերեքն ել հյուսվածքի կամ որգանի ամբողջ մի մասը փրթված ե լինում.

Կտրածի վերքը, յեթե վիրավորող դանակը կամ այլ առարկան ուղղված է յեղել մարմնի մակերեսին անկյունաձև ուղղությամբ, հաճախ ծածկված ե լինում մաշկի մի շերտով, վոր զետեղված ե լինում վերքի յերեսին վորպես խուփ: Այդպիսի դեպքում մաշկը կարող ե շուռ գալ զեպի այն կողմը, ուր ամրացած ե: Այդ տեսակ կտրածի վերքերը կոչվում են ծվենավոր, այսինքն գլտված վերքեր (տես նկ. 3): Նրանք պատահում են նաև կտրտածի վերքերի միջև:

Ծակածի վերք պատճառում են այն ծակող առարկաները, վորոնք՝ չնայելով իրենց յերկայնության, աննշան լայնություն ունեն,

վորի հետևանքով մարմնի վրա շատ փոքր ծակ ե առաջանում: Այս դեպքում վիրավորող առարկան (գնդասեղ, ասեղ, գործելու միջի, սվին և այլն) սովորաբար շատ խորունկ ե թափանցում:



Նկ. 3. Ցուցամատի ծվենավոր վերքի տեսքը.

Վերք պլատմառող առարկան յերբեմն կառող ե միաժամանակ և ծակել և կտրել (դաշույն, գրչահատ և այլն). այս դեպքում առաջանում են այսպես կոչված ծակածիկածիկ վերքեր:

Մինչև այժմ մեր նկարագրած բոլոր վերքերն ընդհանրապես նրանով են բնորոշվում, վոր վերք պլատմառող առարկաներն ունեն կամ սուր ծայր, կամ սուր կող մի կողմից կամ սուր կողմեր յերկու կողմից, կամ յեր-

բեմն ել վիրավորող առարկաներն աստիճանաբար լայնանում են և բազմակող են լինում (սվին): Այսպիսի վերքերի ժամանակ սովորաբար վնասվում ե հյուսվածքի շատ աննշան այն տեղամասը, վոր մոտ ե վերքերի յեղբերին: Մարդկային որգանիզմի այն հյուսվածքներն ու բջիջները, վորոնք՝ յեղերելով վերքը՝ միաժամանակ վնասված են լինում, կազմում են վնասվածքի տեղամասը (կամ, ինչպես ասում են, զոնան):


Վերը թվարկած բոլոր վերքերն այն վերքերից են, վորոնք ունեն վնասվածքի աննշան զոնա, այսինքն տեղամաս: Դա նշանակում է, վոր նման վերքեր հասցնելիս՝ համեմատաբար քիչ բջիջներ են վոչչանում թե՛ վերբի իրա յեղբույթ և թե՛ նրա շուրջը:

Հակառակ յերկույթ ե տեղի ունենում այլ վերքերի ժամանակ, վորոնց նկարագրությանը մենք անմիջապես անցնում ենք: Սրանցից ամենահաճախ պատահողը նվազածի վերքերն են, վոր առաջանում են կամ մարդու վրա վորեւ բութ առարկա ընկնելուց, կամ բութ առարկայով (ձեռնափայտ, քար) խփելուց, կամ յերբ մարդ ընկնում ե կարծր առարկայի կամ գետնի վրա և այլն: Այս գեպքում վնասվածքի հետ միաժամանակ

ինասվում ե նաև արտաքին ծածկույթը
(մաշկը) և վերք ե առաջանում: Յեթե
առարկան շատ ծանր է, կամ մարդու մարմ-
նի մասերն ուժգնապես սեղմված են յեր-
կու շատ ծանր առարկաների մեջ, այդ դեպ-
քում զնիխածի վերքեր են առաջանում: Այս-
պիսի վերքերից՝ մամլակների, բուժերների
զլանների մեջ սեղմված հյուսվածքները ջըն-
ջըխվում են, տրորվում ու բղկտվում:

Յեթե այն առարկան, փորով վիրավորվում
ե մարդ իր շարժողության ժամանակ (ա-
րագ քայլվածք, վազք), ունի անհարթ յեզ-
րեր կամ սուր բերան, վոր աննկատելի կեր-
պով դուրս ե ցցված, և մարդ իր մարմնի
մակերեսով ճանկում ե նրանից, — այդ դեպ-
քում առաջացող վերքը կոչվում ե նիճնված
վերք: Նման վերք կարող ե առաջանալ նաև
այն ժամանակ, յերբ մի բութ առարկա
ուժգնությամբ խփում ե մարմնի մակերե-
սին շեղակի ուղղությամբ: Սրանցից են նաև
այն վերքերը, վոր հասցնում են մարդուն կեն-
դանիները կծելով, մազիներով չափոելով
և այլն: Այսպիսի վերքեր կարող են գոյա-
նալ և այն դեպքում, յերբ մարդու մարմնի
վորեե մասն ընկնի մեքենայի պտտվող մա-
սերի ատամների տակ և այլն:

Այս վերքերի բոլոր տեսակներն ել բնո-
րոշվում են տարբեր ձևեր ունեցող անհարթ
յերքերով (տես նկ. 4), հյուսվածքների տար-
բեր խորություն ունեցող վնասվածքներով
վոչնչացված ու բզկտված մակերեսային,



Նկ. 4. Ճաճանչա-վերնադաստակային հոդի տեղամասի ճըռ-
ճղված վերքը, չլաթելերի վնասվածքով A.

իսկ յերեթմն նաև ավելի խոր նստած հյուս-
վածքների տարբեր մեծությամբ: Այսպիսի
վերքերի դեպքում (կծածի վերքեր) կարող
են առաջանալ միաժամանակ գոյացած բազ-
մաքանակ վիրավորումներ (ատամների նետ-
քերը): Այդպիսի վերքերից կարող են առա-
ջանալ մաշկի առանձին տեղամասերի, ինչ-
պես և ավելի խորը նստած հյուսվածքների
դանագան մեծության ծվեններ և բզկտում-

Ներ: Բոլոր այսպիսի վերքերը, ինչ մեծություն եւ նրանք ունենան, ընորոշվում են հյուսվածքի խոշոր ավերումներով:

Սյսպիսի վերքերի շուրջը շատ հաճախ տեսնում ենք մաշկի գույնի փոխումը, վոր կախում ունի անոթների պայթումներից և վերքի շուրջը գտնվող բազմաքանակ բջիջների քայլայման հետևանքով առաջացած արյունալցումներից: Յերբեմն պատահում ե, վոր մաշկի վերին շերտերը բաժանվում են խորը նստած շերտերից: Յեկ այդ ժամանակ, մննդից զրկված մաշկը դառնում ե դժգույն: Մաշկի տակ կուտակվում ե հետո արդեն լճացած արյունը և ավիշը (գեղնավուն թափանցիկ հեղուկ), վորոնք հոսում են վասաված անոթներից: Այդ հեղուկների բաղադրիչ մասերը փոփոխվում են և կարծես չվասպած մաշկի տակից յերեսում են արյան և ավշի կուտակումների մթնած տեղամասերը:

Վերքերի տարբեր տեսակների հետ ծանոթությունը հնարավորություն ե տալիս յենթադրաբար հասկանալու նրանց ծագումը: Դա առանձնապես մեծ նշանակություն ունի դատական բուժագիտության համար, վորով հետև յերբեմն ոգնում ե վոճիրների մերկաց-

մանը: Վերքերի այն խմբերի միջև, վորոնց վնասված զոնան մեծ ե, մասնավորապես զնդանեկան մակերեսների վրա զետեղված ճր-մըլվածի վերքերի միջև կարող են լինել այն-պիսիներ, վորոնց յեղբերը միանգամայն հարթ են և վորոնք նման են կտրածի վերքերի, թեև նրանք առաջացել են վորեսքությառարկայով խփելուց (գավազան), որինակ զլլին հասցրած ուժգին հարվածից:

Սյսպիսի վերքերն առաջանում են նրանց, վոր բութ առարկան ուժգնապես իջնելով կարծր աստառ (գանգ) ունեցող զնդանեկան մակերեսին, չի կարողանում նույն տեղում բռնվել, այլ սահում ե՝ իր հետ քաշելով նաև մաշկի մի մասը փափուկ հյուսվածքների հետ միասին: Ահա այստեղից ե, վոր ստացվում ե հարթ յեղբերով պատռվածք: Սակայն վերքի շրջապատճ ուշադրությամբ զըննելուց հետո յերևան են գալիս ճմլվածքի հետքերը՝ արյունհոսություն, անոթների պայթում, ջախջախում, մաշկի գունափոխում և վերքի մի յեղբի պատռվածքը, վորի տակ գրպան ե առաջանում:

Բոլորովին առանձնացած տեղ են զըափում նրազենի վերթերը: Պատերազմական գործողությունների ժամանակ այդ վերքերը

մասսայական բնույթի են ունենում: Բազմազան են այդ վերքերը: Նրանք կախված են գնդակի և հրազենի տեսակից: Հրազենի վերքերը կարող են ունենալ մուտքի շատ փոքր և յելքի միքիչ ավելի մեծ ծակ: Յեթե գընդակը սրածայր չե, այլ ունի կտրած, բութ ծայր, այդ դեպքում թեև մուտքի ծակը փոքր ե, յելքի ծակը կարող ե լինել մեծ, անհարթ, շուռ յեկած յեզրերով: Այդպիսի վերքերը յերբեմն նմանում են ճղճղված վերքերին: Պայթուցիկ գնդակները պատճառում են հյուսվածքի տվելի մեծ ավերում: Ներ և առաջացնում են ահագին վերքեր: Այն գնդակը, վոր վոսկը հարվածելիս փոխում ե իր ձեր, նույնպես շատ մեծ վերքեր ե պատճառում: Հատուկ ձեի հրանոթներն ու ոռոմբերը պատճառում են նույնպես բազմատեսակ վերքեր: Մեծ մասամբ նրանք հիշեցնում են ճմբլվածքի, ճղճղվածքի վերքեր և յերբեմն, ինչպես ասում են, տարբերվում են «նյութեղենի, մեծագույն կորատով», մինչև իսկ վերջավորությունների և մարմնի ամբողջ մասերի փրթումով:

Այն վերքերը, վորոնք առաջանում են զանազան առարկաների, սառը զենքերի ու հրազենների հարվածներից (ցից, յեղան, նի-

զակ, գնդակ և այլն), կարող են յելքի ծակ չունենալ: Այդ գեպքում վերքերը կոչվում են կույր վերքեր: Նրանք կարող են թափանցել փափուկ որգանները, վոսկըները կամ խոռոչի յերկու պատերը: Այդ գեպքում նրանք կոչվում են միջանցուկ վերքեր:

Իսկ յեթե նրանք թափանցում են խոռոչների պատերից մեկը, կոչվում են քափանց վերքեր:

Լինում են հասարակ յեվ բարդ վերքեր, նախած թե ինչ ավերումներ են առաջացել: Հասարակ վերքերը նրանք են, վորոնք գրանրվում են ծածկույթների սահմանում: Բարդ ասվում են այն վերքերը, վորոնց հետ միասին վասված են նաև համապատասխան հյուսվածքները (մկանները, ջլաթելերը, վոսկըները և այլն):

Վերջավես, նայած վերքի առողջացման ընթացքին, լինում են չբարդացած վերքեր, վորոնց առողջացումը տեղի յե ունենում սովորական ժամանակին, առանց թարախակալելու, և բարդացած վերքեր, վորոնց առողջացումը ձգձգվում ե վերքերի թարախակալման, նրա առանձին տեղամասերի անզգայացման և այլ բարդությունների հետևանքով, Բայց մարդու ստացած կամ հաց-

բած բոլոր վերքերը պատահական չեն։
Նրանց մի մասը խիրուրգ բժիշկներն են
ստիպված լինում առաջացնել ոպերացիայի
ժամանակ բուժական նպատակով, հիվան-
դությունը վերացնելու համար։ Այսպիսի
վերքերը կոչվում են ոպերացիայի վերքեր։
Ի տարբերություն ամեն տեսակ պատահա-
կան վերքերի, ոպերացիայի վերքերը բաց
են արվում այն հաշվով, վոր խիրուրգը կան-
խավ վորոշում ե վերքը բաց անելու հա-
տուկ տեղամասը, նրա բնույթը և առողջաց-
ման ժամանակը։ Այն միջոցառումները, վոր
կիրառում ե խիրուրգը նման վերքեր բաց
անելիս, բազմաթիվ գեղաքերում ապահովում
են ոպերացիա արված վերքերի նորմալ
առողջացումը։


ՎԵՐՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Մարդու ստացած բոլոր վերքերն ել ունեն
նույն հատկանիշները, վոր հատուկ են բոլոր
վերքերին։ Այդ հատկանիշներից են՝ վերքի
քերանը, արյունահոսությունը յեկ ցավը։

Վերքի բերան կոչվում ե նրա յեզրերի
բացվածքը (նկ. 2)։ Այս հատկությունը հա-
տուկ է բոլոր վերքերին, միայն թե այդ-

պիսի բացվածքները տարբեր մեծություն են
ունենում։ Դա կախված է վերափորված
հյուսվածքի առանձնահատկությունից, այ-
սինքն՝ վերքի սահմանում գտնված հյուս-
վածքների բնույթից և վերքի այն ուղղու-
թյունից, վոր ունի մարդու մարմի վորոշ
տեղամասերի վերաբերմամբ։ Մարդու մաշկի
մեջ հաստատված են առաձգական (ելաս-
տիկ) մանրաթելեր, վորոնք լնդումակ են
կծկվելու։ Նրանք զետեղված են վորոշ կար-
գով։ Գիտնականներն ուսումնասիրել են այդ
մանրաթելերի դիրքը մարդու մաշկի մեջ, և
խիրուրգ բժիշկները գիտեն այժմ, թե վոր
ուղղությամբ պետք է տարվեն ոպերացիոն
հատումները (կտրվածքները), վորպեսզի նը-
րանց բացվածքները, վորչափ կարելի յե,
նեղ լինեն (տես նկ. 5)։ Սա անհրաժեշտ ե
նրա համար, վորովհետև ոպերացիայից հետո
սպին այսպիսի գեղաքերում լինում ե շատ
նուրբ։ Բացի առաձգական մանրաթելերից,
մաշկի մեջ լինում են այսպես կոչված հարք
մկանային մանրաթելեր։ Յերբեմն ել վերքն
այնքան խորունկ է լինում, վոր խորը նըս-
տած մկանն ել ե կտրվում։

Յեթե հատումը կատարվել ե առաձգա-
կան մանրաթելերի յերկայնությամբ, ապա



Նկ. 5. Ոպերացիոն հատութերի ուղղության սխեման՝ վերե
նվազ բացվածքի համար.

բացվածք չի առաջանում, հետևաբար և վերքի բերանը մեծ չի լինում: Իսկ յեթե հատումը կատարվի առաձգական մանրաթելերի լայնության ուղղությամբ կամ յեթե լայնության ուղղությամբ վիրափորվի նաև ավելի խորը նստած մկանը, այդ դեպքում կարգած առաձգական կամ մկանային մանրաթելերը կծկվում են (կարճանում են), վորի հետևանքով վերքի յեզրերն իրարից հեռանում են բավականաչափ տարածության վրա: Դրանով ել բացատրվում ե, վոր յուրաքանչյուր վերք միշտ ել, ինչպես ասում են, բացված բերան ե ունենում:

Վերքերի յերկրորդ հատկանիշն արյունակությունն է: Յերբ վնասվում են հյուսվածքները, դրա հետ միասին սովորաբար շատ կամ քիչ վնասվում են նաև նրանց մեջ տեղափորված և նրանց սնուցանող անոթները: Վորովինետև վերքի ժամանակ միշտ վնասվում ե նաև ծածկույթը (մաշկը), ապա ուրեմն անոթներից դուրս հոսող արյունը վերքից թափվում է (յեթե մաշկն ել վիրափորված ե), կամ կուտակվում ե մարդու մարմնի խոռոչներում (յեթե վիրափորված ե լյարդը, ապա արյունը հավաքվում ե վորովայինի խոռոչում):

Վերքերի յերրորդ ընդհանուր հատկանիշը ցալն է: Իսա առաջանում են նրանից, վոր մասվում են ներփային վերջավորությունները, վորոնք ցրված են մարմնի ամբողջ մակերեսին: Վորքան շատ ներփային վերջավորություններ են մասսված, այնքան ավելի յե արտահայտվում ցավը: Մակայն ներփային բնիկների և նրանց վերջավորությունների քանակը մեր մարմնի բոլոր մասերում հավասարաչափ չեն: Կան այնպիսի տեղամասեր, ուր նրանք խիստ շատ են (որինակ՝ մատների ծայրերը) և կան այնպիսիները, ուր նրանք քիչ են: Որինակ, աղիքի ծածկույթը կտրելու ժամանակ մարդ ցավ չի զգում: Դրա պատճառն այն ե, վոր այստեղ ներփային վերջավորություններ չկան:

Այս հանգամանքը հնարավորություն ետալիս ոպերայիա անել փորոտիքը, տեղական զղայազրկման յենթարկելով միայն վորովայնի պատերը, իսկ փորոտիքի ոպերացիան անցնում ե առանց ցավ զգալու: Յերբեմն հիվանդները պնդում են, վոր իրենց քնացնեն, յենթազրելով, վոր փորոտիքի կամ այլ որդանների ոպերացիան ցավոտ ելինելու: Այնինչ իրականում, նրանք ցավ զգալ կարող են միայն վորովայնի պատին ոպերա-

ցիոն վերը բանալու ժամանակ: Իսկ այս վերջին ցավն ել վերացվում ե տեղական զգայազրկում առաջացնելով, այսինքն՝ զգայազրկող լուծույթ ներարկելով:

Ցավի ուժը կախված ե և վերքի մեծությունից ևնրա բնույթից: Այս վերքերը, վորոնց մասսվածքի զոնան մեծ ե, ավելի սաստիկ են ցավում, վորովիետև նման դեպքում ավելի շատ ներփեր են մասսված լինում: Կծավերքերի (կենդանիների ու միջատների խայլոցները) մեջ կարող են թափանցել թունավոր նրութեր. այդ դեպքում թույնը՝ ներփերի վրա ազդելով՝ գրգռում ե նրանք, ավելի մեծ ցավ առաջացնելով: Վորքան պակաս ե զարգացած կենդանին, այնքան նվազ զարգացած ե ցավի զգացողությունը վերքերի ժամանակ: Այս յերեսույթը զիտվում ե մարդու մոտ՝ նայած նրա հասակին, Բոլորովին փոքր յերեխանները վիրավորման ժամանակ աննշան ցավեր են զգում հաճախ, այնինչ մեծերի զգացած ցավը նման դեպքերում շատ ավելի յելինում: Մա կախված ե այն հանգամանքից, վոր ծծկեր յերեխանների ներփային զգացողական վերջավորությունները դեռ բավականաչափ չեն զարգացած:

Յավը սովորաբար առաջանում ե վիրավորման հետ միաժամանակ։ Մի որ անց և շատ հազիվ յերկու որդից՝ ցավն խսպառ անցնում ե։ Բայց հետագայում ևս կարող են ցավեր առաջանալ վերքում ու նրա շուրջը։ Սա արդեն կախված ե նրանից, վոր վերքը կամ նրա շրջապատը կորցնում ե իր անշարժ վիճակը վիրակապի մի կողմ սահելուց, կամ վերք բացված տեղամասի շարժողությունից ե կամ այն բարդության հետևանքով, վոր յերեան ե գալիս վերքի առողջացման ընթացքում։ Յեթե վերքը լավանում ե առանց բարգությունների, այդ դեպքում, վորպես կանոն, վերքը ցավ չի ունենում։

ՎԵՐՔԵՐԻՑ՝ ՈՐԳԱՆԻՉՄԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՎՏԱՆԴՆԵՐԸ

Ինչ վերք ել վոր լինի, մի շարք վտանգներ են սպառնում մարդու որգանիզմին։ Վիրավորման ժամանակ, ինչպես արդեն հիշատակել ենք, արյուննօսություն ե առաջանում։ Յեթե արյուննօսությունն առատ ե, մարդուն կարող ե դրանից մահ սպառնալ։ Արյուննօսությունը լինում ե տարբեր տեսակի։

Այն անոթները, վոր տանում են վառ կարմրագույն արյունը սրաից գեղի այլ և ալլորգաններն ու հյուսվածքները, մենք կոչում ենք արտերիաններ։ Արտերիային արյան մեջ սպառունակվում ե շատ թթվածին, վոր նատալիս ե որգանիզմի հյուսվածքներին ու բջիջներին։ Արյունն արտերիաններում հոսում ե շնորհիվ այն ճնշման, վոր կախված ե սրտի գործունեյությունից և արտերիայի պատի լարումից։ Դրա համար ե, վոր արյունն արտերիայից ցայտում ե շատրվանի պես։ Յեթե ծղիկի վրա, ուր շոշափվում ե զարկերակը, վերք լինի ու այդ վերքում կարված ե այսպես կոչված ճաճանչային արտերիան, ապա արյուննօսությունը, յեթե ժամանակին չկանգնեցվի, կարող ե մահով վերջանալ։ Պակաս վտանգավոր է վենային (յերակային) արյուննօսությունը։ Իր թթվածինը հյուսվածքներին տալուց ու նրանցից ածխածին ստանալուց հետո, վենաների արյունը գեղի սիրտն ե հօսում։ Արյան կարմիր գնդիկներում գտնվում ե յերկաթպարունակող հյութ (հեմոգլոբին), վորը թթվածնի հետ տալիս ե վառ կարմիր միացություն, իսկ ածխաթթվի հետ՝ մուգ-կարմիր։ Դրա համար վենաներում արյունն ունի մուգ

գույն։ Այդպիս ել լինում նա նաև նրանցից գուրս թափվելու ժամանակ։ Բացի դրանից յերբ կտրում են վենաները, արյունը թափվում ե համաշափ, առանց ցայտելու, վորովհետեւ վենաներում ձնշումը շատ ցած ե։

Վենային (յերակային) արյունը սովորաբար հոսում ե սրտից հեռու գտնվող վենայի կտրած տեղից։ Իսկ յեթե կտրած տեղը սրբախն մոտիկ ե, վիրավորելուց հետո արյունն հոսությունը շատ շուտով դադարում ե։

Յուրաքանչյուր վիրավորման դեպքում, խիստ շատ վասպում են ամենափոքր արյունատար անոթներ-կապիլարներ (մազանոթներ)։ Արյունհոսության արագությունն այդ անոթներից ավելի քիչ ե, քան արտերիաներից, բայց ավելի շատ, քան վենաներից։ Այդ կապիլարային արյունհոսությունն արագ կանգ ե առնում։


Որդանների վիրավորման դեպքում, արյունը դուրս ե հոսում որդանի (լյարդ, փայծաղ) հյուսվածքի ամենամարիկ անոթներից։ Այդպիսի արյունհոսության ժամանակ շատ մանր արտերիաների, վենաների և կապիլարների հատուկ դասավորությունը խանգարում ե անոթների կտրած պատերի կցմանը, և արյունհոսությունը բավական

յերկար ե շարունակվում։ Այս դեպքում, վիրավորված մակերևույթի վրա բոլոր ժամանակ կաթիներով դուրս ե ծորում արյունը։ Իսկ սովորաբար ինչ տեսակ վերը ել լինի, արյունահոսությունը խառն ե լինում։

Յեթե ավելի խոշոր արտերիաների վիրավորման ժամանակ մահացու արյունհոսություն ե սպառնաւմ մարդուն, ապա մի քանի վենաների վիրավորումը նույնպես կարող ե նրան մահ սպառնակ սիրտը ու թոքերի կապիրաներն ոդ մտնելու հետևանքով։ Սակայն այդպիսի դեպքերը հազվագետ են և դիտվում են միայն վորոշ բնագավառների (վիզ, կուրծք) մի քանի վենաների վիրավորման ժամանակ։

Անոթներից գուրս թափվող արյան հատկությունն ե շատ շուտով մակարդվելու և լերթ գառնալու վերքում (նկ. 6)։ Բացի դրանից, նման լերթեր գոյանում են նաև անոթների մեջ։ Դրա համար մանր անոթների արյունհոսությունն աստիճանաբար կանգ ե առնում։ Դրա հետ միաժամանակ դադարում ե նաև լերթի արյունհոսությունը։ Արյան մակարդման պրոցեսը բարդ ե։ Մակարդումն յերեքն ուշանում ե, իսկ հազվագյուտ դեպքերում բոլորնվին ել բա-

ցակայում եւ Այն հիվանդները, վորոնց արյան մակարդումը շատ նվազ աստիճանով է կատարվում, կոչվում են հեմօքիլիկներ (ար-



Նկ. 6. Կերբացած արյունը.
Բ - արյունային թերթիկներ, Ե նըանցից ճյուղավորվող
ֆերելնի թելերը, Վ - արյան կարմիր գնդիկները.

յունհոսկաններ), իսկ հիվանդությունը — հեռմաֆիլիա (արյունհոսկանություն): Յերբ վերք են ստանում հեմոֆիլիկները, նրանց

աննշան վերքերն անդամ հաճախ մահվան պատճառ են դառնում, վորովինետև անկարելի յելինում արյունհոսությունը կանգնեցնել:

Մյուս վտանգը, վոր սպառնում ե վերք ստանալու ըստելից սկսած, կախված ե այն բանից, վոր մեր մարմի հյուսվածքները թափանցում են միկրոբներ: Այդ կենդանի, բազմատեսակ, ամենամանրիկ եյակները (նրանց կարելի յեւ տեսնել միայն միկրոսկոպով) անազին քանակությամբ տեղավորվում են մեր մաշկի և լորձաթաղանթների վրա (փորոտիքի, բերնի), ինչպես նաև մեր որգանների պարունակության մեջ (կղկղանքային զանգվածներ, մաղձ): Բացի դրանից, խիստ շատ միկրոբներ կան մարդուս շրջապատող միջավայրում և այն առարկաների վրա, վորոնց հետ նա շփում եւ: Այդ միկրոբներից շատերն, ընկնելով վերքի մեջ, այստեղ գըտնում են իրենց զարգացման համար նպաստավոր օննդատու միջավայր, այսինքն՝ լճացած հյուսվածքների ու բջիների կտորներ:

Հենց այս միջավայրում ե, վոր իրենց զարգացման համար միկրոբները գտնում են բավականաչափ թացություն և վերջապես 37° — $37,5^{\circ}$ տաքություն, վոր նրանց բազ-

մաշման և կյանքի համար միանգամայն համապատասխան եւ:

Բայց այդ դեպքում մարդու որդանիզմը անտարբեր չի մնում: Մարդու որդանիզմի ճեղուկներից մի քանիսը՝ արյան կազմը (նրա ճեղուկ մասը) և մաղձը կործանարար աղդեցություն ունեն միկրոբների վրա: Բացի սրանից, դեպի վերքն սկսվում են հավաքվել մեծ քանակությամբ արյան սպիտակ գնդիկները — լեյկոցիտները, նմանապես և բջիջները, վորոնք թափառում են հյուսվածքում: Հենց այստեղ եւ յերեան են գալիս բջիջներ, վորոնք մինչև վիրավորումը անշարժ եյին, իսկ հետո դեպի վերքը շարժվելու հատկություն ստացան:

Հեղուկային մասերի և բջիջների այսպիսի տեղափոխումները վերքի ու նրա պատերի ուղղությամբ կատարվում են զլիսավորապես վնասված տեղի հյուսվածքի վիճակի փոփոխումների հետևանքով ու միկրոբների ներթափանցման ազդեցության շնորհիվ:

Միկրոբների ներթափանցումը վերքի մեջ լինում են համարյա միշտ, բայց ակնհայտ վնաս և հասցնում նա միայն այն ժամանակ, յերբ միկրոբներն ինքնին ընդունակ են հանդիսանում հիվանդություն առաջ բերել, ու

յերբ նրանց թիվը բավականաչափ ե լինում այդ անելու:

Յեթե այդ պայմաններն առկա յեն վերքում, ապա ստացվում ե վարակումը, կամ, ինչպես ասում են, վերքի ինֆեկցիան: Այս դեպքում վերքը թարախակարում ե, ու նրա առողջացումը կարող ե շատ յերկարել: Մինչեւ վոր միկրոբների բազմացման համար կան բարեհաջող պայմաններ, վերքն արտադրում ե թարախ և այնքան շուտ չի լավանում, ինչպես այդ կարող եր լինել թարախ շունեցող վերքի հետ:

Սակայն այդ քիչ եւ Վտանգը կայանում ե նաև նրանում, վոր վերքի վարակման դեպքում, մարդու ամբողջ որդանիզմը մասնակցում ե վերքի տեղական հիվանդացման դեմ մղված պայքարում ե, բացի դրանից, ինքնել թուլանում ե միկրոբների՝ արյան ընդհանուր հոսանքն ու առանձին որդանները թափանցելու հետևանքով: Բացի դրանից, ներծծվում են միկրոբների ու նրանց կենսագործունելության, որդանիզմի ու նրա հեղուկների վնասված բջիջները քայլայուկի արտադրանքները, մի բան՝ վոր նույնպես վնասակար ներգործություն ե ունենում ամբողջ որդանիզմի վրա: Յերբ կենդանի միկ-

բոբները տեղափոխվեն հյուսվածքների խոր-
քերը կամ հեռավոր տեղամասերը, այդ գեպ-
քում կարող են միկրոբների հարվածներին
յենթակա նոր ոջաղներ գոյանալ, ուր նրանք
իրենց զարգացման համար լավ պայմաններ
կդառնեն։ Այդ գեպքում որգանիզմը կարող է
թուլանալ, և այն ժամանակ սկսվում ե ընդ-
հանուր վարակումը, վոր հաճախ մահով ե
վերջանում։

Յերկար ժամանակ, քանի դեռ բժիշկները
չկիտեյին միկրոբների կատարած դերը վեր-
քի վարակման գործում, ինֆեկցիան հարվա-
ծում եր համարյա յուրաքանչյուր քիչ թե
շատ մեծ վերք։ Ներկայումս մենք արգեն
լավ ծանոթ ենք այն միջոցառութերի հետ,
վորոնք անհրաժեշտ են ինֆեկցիայի դեմ
պայքարելու և նրան կանխելու համար։

Ուաշ, համարյա միշտ, անբարեհաջող ըն-
թացք եյին ունենում վերքերը Հաճախ, լավ
կատարված ոպերացիան, վոր հիվանդին մա-
հից եր փրկում, վերքի հետագա ընթացքի
շնորհիվ ապարդյուն եր դառնում։ Հիվանդը
մեռնում եր վոչ այն հիվանդությունից, վոր
ոպերացիա յեր պահանջել, վոչ ել արված
ոպերացիայի հետևանքով, այլ վերքի ու նրա-
նից ել՝ ամբողջ որգանիզմի վարակումից։

Սակայն հետագայում գիտնականները ծա-
նոթացան միկրոբների հետ, սկսեցին դիտել
բակտերիաներին, ուսումնասիրել նրանց կեն-
սագործունեյությունը։ Բանից զուրս յեկավ,
վոկ ամենուրեք, ուր տեղի յե ունենում
խմորում (մրգերի հյութը, կաթը) և փտում,
ամեն տեղ այդ կախում ունի և կատարվում
ե մասնակցությամբ այդ փոքրիկ որգանիզմ-
ների, վորոնք բաղկացած են մի բջջից և
կոչվում են միկրոբներ, բակտերիաներ։
Այս միկրոբներին (վորոնք տեսանելի յեն մի-
այն միկրոսկոպով) ուսումնասիրելու գոր-
ծում շատ բան են արել Պաստյոր և Կոխ
զիտնականները։ Խիրուրգ Լիսենը (1827—
1912 թ.) ուշադրություն դարձեց այն բանի
վրա, վոր վոսկրների կոտրվածքները, յեթե
մաշկի վրա վերք չկա, լավանում են ավելի հա-
ջողությամբ, քան կաշվի վերքի հետ զուգորդ-
վող կոտրվածքները։ Այս վերջին տեսակի
մահացությունների տոկոսը շատ մեծ եր լի-
նում։ Լիսենը վորոշեց, վոր տվյալ գեպ-
քում, իրեն պատճառ, կարող ե ծառայել
վերքի արտաքին միջավայրի հետ շփում ու-
նենալը, և յենթադրեց, վոր վերքի թարա-
խակալումը կախված ե կենդանի, հասարակ
աչքով անտեսանալի միկրոբների նրա մեջ

մուտք գտնելուց, իսկ և իսկ այնպես, ինչ-
պես այդ լինում ե գինու, կաթի և այլ
մթերքների հետ, յերբ նրանք սկսում են
խմորվել ու փտել: Դրաւ համար Լիստերը
կիրառեց մի շարք միջոցներ, վորոնք խափա-
նում են միկրորգանիզմների մուտքը դեպի
վերքերը:

Լիստերի ձեռք բերած հաջողությունները,
կարելի յե ասել, ապշեցուցիչ եյին: Թարա-
խակալումների քանակը շեշտակի ընկավ, հի-
վանդների և ոպելսացիայի յենթարկվածների
մահացությունը նշանակելի չափով իջավ:
Հնարավոր յեղավ ոպերացիաներ անել մար-
մի այնպիսի մասերում, վորոնց մասին ա-
ռաջ նույնիսկ մտածելն ել ավելորդ եր: Խի-
րուրդիայի զարգացումն ուժեղ զարկ ստա-
ցավ շնորհիվ այն հանգամանքի, վոր խիրուր-
դի վերաբերմունքը դեպի վերքը փոխվել եր:

Յենթաղբելով, վոր միկրոբները վերքերի
մեջ են թափանցում ողի և վերքը շրջապատող
ամեն առարկաների միջոցով, լիստերն սկը-
սեց սպանել նրանց քիմիական նյութերով,
մասնավորապես՝ կարբույան թթվի լուծույ-
թով: Դրա համար նա առաջարկեց ոպերա-
ցիայի ժամանակ սրսկել ոպերացիա կատա-
րելու սենյակի ողը, վերքերը կապել նույն

լուծույթով առգործված մարլայսվ, լվանալ
հիվանդի մաշկը, լվանալ ձեռքերը. նա ստի-
պում եր, վոր ոպերացիային մասնակցողներն
ամենքն ել այդ լուծույթով լվանան ձեռ-
քերը, նույն լուծույթի մեջ տեղափորեն գոր-
ծիքները: Մի խոսքով, այն բոլորը, ինչ-վոր
շփում ուներ վերքի հետ, լվացվեց կամ թրջը-
վեց կարբույան թթվի լուծույթով: Սրա
հետեւ վիճում եր այն, վոր միկրորգա-
նիզմները փոչնչանում եյին, իսկ մնացող-
ներն անկարող եյին զարգանալ կարբույան
թթվի լուծույթով թրջված վիրակապի տակ:

Այսպիսի վերաբերմունքը դեպի վերը
փոփոխեց նաև նրա մշակման և ոպերա-
ցիայի, այսինքն մի այնպիսի աշխատանքի
նկատմամբ, վորի ժամանակ կարելի յե ան-
տեսել մաքրության հիմնական պահանջները:
Սակայն առաջ քան թե վերքերի բուժման
նոր յեղանակը, վոր կոչվեց անխիսապիշիկ
(հականեխիչ) յեղանակ, լայն ծավալ ստա-
ցավ խիրուրդիական պրակտիկայում, լիս-
տերին հարկ յեղավ դիմագրավել այն շատ
մեծ պայքարին, վոր մզկեց նրա գեմ: Նոր
յեղանակի բացահայտ հաջողությունների հետ
միաժամանակ պարզվեց, վոր քիմիական
նյութն սպանում ե վոչ միայն կենդանի միկ-

բորին, այլ և վոչնչացնում եւ մարդկային
կենդանի բջիջը: Աւստի սկսեցին վորոնել
այնպիսի քիմիական նյութեր, վորոնք՝ սպա-
նիչ ներգործություն անելով բակտերիաների
վրա, միաժամանակ խնայեյին մարդու որ-
դանիզմի բջիջները վերքում: Այդ անհրաժեշտ
եր մանավանդնրա համար, վոր բջիջների՝ միկ-
րոսկոպի միջոցով ուսումնասիրված կյանքը
ցույց եր ատլիս, վոր նրանք մղում են պայ-
քար և շատ հաճախ հաղթանակ են տանում
միկրոբների վրա: Նշանակում ե, քիմիական
նյութերի լուծույթների ներգործությամբ
(կարբույան թթու, սուլեմա, բորաթթու, յոդ
և այլն) պետք ե թուլացներ վերքի առանց
այն ել վնասված բջիջները:

Դժբախտաբար, մինչև այժմ ել չեն գտնը-
ված այնպիսի քիմիական նյութեր, վորոնք՝
ներգործելով, միկրոբների վրա, վոչ մի վնա-
սակար ազդեցություն չանեյին վերքի բջիջ-
ների վրա:

Սակայն, վերքերի բուժան հաջող ար-
դյունքների կապակցությամբ, համեմատելով
նախկին տարիների հետ, յերբ գեռ անտի-
սեպտիկան չեր գործադրվում, խիրութքիան
շատ մեջ հաջողությունների հասավ: Նրա
հետագա զարգացումը պահանջում եր վեր-

քերի ավելի ու ավելի հաջող բուժում: Այդ
իսկ ժամանակները բակտերիաների մասին), վոր դեռ
նորագյուտ գիտություն եր, արդեն կիրա-
ռում եր՝ միկրոբներին բարձր տաքություն
կամ յեռացման միջոցով վոչնչացնելու յե-
ղանակները: Այդ յեղանակի զործադրու-
թյամբ միկրոբները մեծ մասամբ վոչնչաց-
նում եյին, վորովհետև նրանց միայն մի
քանի տեսակներն են (սերմիկները), վոր
կարողանում են դիմանալ 100° հասնող ջեր-
մաստիճանի:

Այդ ժամանակներում արդեն հայտնի յեր,
վոր վերքերն իսպառ զերծ պահել միկրոբ-
ներից անկարելի յե: Կարեվորն այն ե, վոր
նոր միկրոբներ չափելանան այն սակավաթիվ
միկրոբներին, վորոնք մաշկից ընկնում են
ոպերացիայի համար բացված վերքերի մեջ:
Հայտնի յեղավ նմանապես և այն, վոր վեր-
քերն ողի միջոցով համարյա յերբեք չեն
վարակվում միկրոբներով: Բացի դրանից
պարզվեց, վոր բոլոր միկրոբները միատեսակ
չեն ազդում վերքի վրա: Միկրոբներից վո-
րմանք միշտ հանդիսանում են պարագիաներ
(մակաբույժներ) և վերքի բջիջների կողմից
բուռն ներգործություն են առաջ բերում,


իսկ մյուսները հեշտությամբ վոչնչանում
են վերքում, առանց թարախակալում առա-
ջացնելու։ Սակայն ավելի ուշ, հայտնի յե-
ղավ, վոր այդ միկրոբներն ել, իրենց համար
հարմար պայմաններ գտնելով, կարող են
նույնպես պարագիտներ դառնալ։

Խիբուրգ Բերգմանը (1836 — 1907) 1886
թվից սկսած խիբուրգիայի մեջ մտցրեց
բակտերիոդիայի այն պրիորները, վոր
կիրառում ելին, յերբ հարկավոր եր լինում
ստանալ այնպիսի սննդառու միջավայր, ուր
վոչ մի միկրորդանիզմ չլիներ, կամ այն-
պիսի գործիք, վորի վրա վոչ մի միկրոք չլի-
ներ։ Միկրոբներին քիմիական լուծույթնե-
րով սպաննելու և դրանով իսկ վիրքի բջիջ-
ների վրա անհրաժեշտաբար ներդործելու
փոխարեն, Բերգմանն սկսեց կիրառել վա-
րակաղերձման ֆիզիկական յեղանակը՝ բարձր
ջերմաստիճանի միջոցով։ Այսպես, վերքերը
հակապարագիտային յեղանակով բուժելու
փոխարեն մուծվեց անպարագիտ յեղանակը։
Յերկար վորոնումներից հետո գտնվեց այն
յեղանակը, վորի շնորհիվ վերքերն ապատ են
մուռ միկրորդանիզմներից՝ սկսած այն
մոմենտից, յերդ հիվանդն անցել է բժշկի
խնամքին։

ԻՆՉՊԵՍ ԿԱՆԽԵԼ ՎԵՐՔԻ ՎԱՐԱԿՄԱՆ ՎՏԱՆԳԸ

Վիրակապերը, ձերմակեղենը, գործիքները,
թելերն ու այն ամենն, ինչ-վոր շփում ունի
վիրքի հետ, վարակագերծ անելու համար
ներկայումս կիրառում են բազմաթիվ այլե-
այլ ապարատներ և հարմարանքներ։ Վիրա-
բուժական յուրաքանչյուր հիմնարկում հի-
վանդանոցում կամ ամբուլատորիայում հիմ-
նական ապարատն և հանդիսանում ավտո-
կիավը։ (Տես նկար 7)։


Ավտոկլավը կրկնակի պատեր ունեցող
կաթսա յեւ Պատերի միջև գտնվում ե ջուրը։
Նյութեղեններն ու ձերմակեղենը զետեղվում
են մետալից կամ բրեզենտից պատրաստված
ափերի մեջ (տես նկար 8)։ Տփերը զետեղ-
վում են ավտոկլավներում։ Պինդ ծածկելով
ավտոկլավի կափարիչը, տաքացնում են նրա
կրկնակի պատերի մեջ յեղած ջուրը Պոյա-
ցած գոլորշին, ճնշման շնորհիվ (ջերմաստի-
ճանը 100° ից բարձր) բարձրանում ե վեր,
ավտոկլավի ներքին պատի մեջ գտնված
անցքերից մատում ե ներքին կաթսան, անց-
նում ե տփերի անցքերից և լցնում ե վիրա-
կապության վարակագերծվող նյութեղենի



Նկ. 7. Ավտոկլավ: Յերեվում են նրա կարստերի մտանակի հեռացող պատերը. Բ - ներքեն կաթսայի գետեղարանը՝ վերակադրության նյութեղեների տփերի համար. Ը - արտադրական կաթսայի զետեղարանը՝ ջրի և շողեգոյացման համար. Վ - արտաքին պարուտակը (որկապկա)՝ ծուխը դաշը դուրս գալու համար. Դ - ապակե խողովակա՝ հումքի համար. Ե - մակարեւությանը դիմումը համար. Ֆ - համաստիճանից. Հ - մակարեւությանը դիմումը համար. Ա - ավտոկլավի գլուխակը՝ ջրի և շողեգոյացման համար.

ու ձերմակեղենի շերտերի միջի յեղած ամբողջ տարածությունը: Յերբ վարակագերծումը կատարված վերջացած է, տփերը հանվում են ու նրա վրա գտնված կցորդիչները շուրջ են տալիս այնպես, վոր թմբուկի պատի մեջ բացված անցքերը փակվեն. Թմբուկներում գրանված նյութերը պիտանի յեն գործածության համար, վորովհետեւ վարակագերծ են արված: Վիրակապության նյութեղենն ու ձերմակեղենն ավտոկլավում պահելու ժամանակակից կախված է ջերմաստիճանից: Ա - կցորդիչը (մուֆտան). Բ - ջերմաստիճանից: Այսպես, յեթե Ցելսիով $100 - 112^{\circ}$ է, բավական ե $\frac{3}{4}$ ժամը, իսկ յեթե Ցելսիով 134° է, — ընդամենը $10 - 15$ րոպե:

Գործիքները յեռացվում են վարակագերծման հատուկ պարաբաններում, վորոնք ստեղի-




Նկ. 8. Տուփը (թմբուկը), վորովակով պարապանում ստեղիքացիայի (թակտերիացներման) են յենքարդվում յեր պահպանվում են ստեղիքացին հյուրերն ու ներմակեղերը.

Բ - կցորդիչը (մուֆտան). Կողորդու դուրս գալու անցքերը.

լիգասոր են կոչվում. դրանց կազմությունը յերկում է նկարում (տես նկար 9):

Այս դեպքում, ջրի յեռացման ժամանակ 10 — 20 րոպեյում վոչնչանում են բաղմատեսակ միկրոբներ:




Նկ. 9. Ելեկտրական ստերիլիզատոր՝ գործիքները յեռացմելու համար.

Բ — ստերիլիզատորի տուփը, Բ — կափարիչը, Վ — ներքին ցանցափոր մատուցարան. (ծակերը՝ գործիքների վրայից ջուրը թափվելու համար են), Ղ — լանիչները՝ մատուցարանը դուրս բերելու համար.

Վիրակապության նյութերին ձեռքով չկիպ-չելու համար կիրառում են հատուկ ունելիքներ և պինցետներ (տես նկար 10): Վերքի վրա աշխատելիս՝ յուրաքանչյուր ձեռքում ունենում են մի-մի պինցետ կամ, յերբ այդ անհրաժեշտ ե, ուրիշ գործիքներ, ինչպես՝

զոնդ, կեռիկներ, արյուն կանգնեցնող պինցետ, ասեղակալ իր ասեղով և այլն (տես նկար 10):



Նկ. 10. Գործիքներ, վօրոնիք կիրառվում են բուժական հիմնարկերում վերերի ժամանակ առաջին ոգմություններ հասցելու համար.

Ա — կորնցանո՞վ վիրակապության նյութերն ու գործիքները վերցնելու և տալու համար. Բ — պինցետ. Վ — կեռիկ՝ պիտերու ժամանակ վերը լայնացնելու համար. Դ — արյուն կանգնեցնող պինցետ. Ե — ասեղակալ, ասեղով ու թելով.

Սակայն ինչ ել լինի, գործիքներով աշխատելիս, անհրաժեշտ ե ձեռքերը նախապատրաստել աշխատանքի համար ինչպես

ոպերացիայի, այնպես ել ուրիշ վերքերի դարձմանման ժամանակ Ամենից լավ ե աշխատանքը տանել վիրաբուժական ուստինե ձեռնոցներով, վորովհետև դրանք յեռացման միջոցով հետությամբ են վարակազրկվում, Բայց այսպիսի ձեռնոցներով ել աշխատելիս՝ անհրաժեշտ ե հատուկ յեղանակով նախապատրաստել ձեռքերը:

Վերքի հետ շփում ունեցող մարդկանց ձեռքերը պետք ե մաքուր լինեն և կոշտ աշխատանքից գոյացած մնասվածքների հետքեր չպետք ե կրեն իրենց վրա. հակառակ դեպքումնրանք վատ են մաքրվում: Յեղունդները պետք ե կարճ կտրված լինեն: Վորպեսզի մաշկի վրա յեղած միկրոբները չընկնեն ոպերացիայից գոյացած, ինչպես և պատահական վերքերի մեջ, ձեռքերի մաշկը ոծում են յոդի թթվով (նաստոյկա), վորը շատ լազ վարակազերծող ու դաբաղող միջոց ե,

ՎԵՐՔԻ ԼԱՎԱՑՈՒՄԸ

Ի՞նչ վերք ել վոր լինի, նրա առողջացումն ընթանում ե վորոշ ուղիով: Դեռ շատ հին ժամանակներում բժիշկ Հալենը, վոր ապրում եր Հոռմում (130—210 թվերին), դիտել

եր, վոր բոլոր վերքերը միատեսակ չեն առողջանում: Այդ կախված են նրանից, վոր վերքերի միքանիսի յեզրերը կամ պատերն այնքան մոտ են իրար, վոր նրանց միջև արյունով, մաղձով, հյուսվածքի կտորներով լցված համարյա վոչ մի տարածություն չի մնում: Մյուսների յեզրերն ու պատերը, ընդհակառակը, շատ են հեռացած իրարեց յերքեմն լինում են և այնպիսի վերքեր, վորոնց հյուսվածքից բավական մեծ կտոր կտրված պոկված ե. կան նաև վերքեր, վորոնց հյուսվածքները սաստիկ շարդված ու ճիշված են, կենսունակ չեն և շարունակում են անզգայանալ, մեռուկ դառնալ:

Առաջին տեսակ վերքերի յեզրերն արագ իրար են կցվում և 6—7 որից նուրբ սպիտերներ կազմում: Այսպես են մեծ մասամբ ոպերացիայի հետևանքով բացված կամ նոր ստացված ու կարված վերքերը: Յերկրորդ տեսակի վերքերը լավանում են այն ժամանակ, յերբ վերքի պատճառով գոյացած բաց խոռոչը լցվում է նոր կազմված, վերքի պատերից և յեզրերից աճած բջիջներով, միըսն, վոր յերկար ժամանակ ե պահանջում: Այդպիսի վերքերում աճած հյուսվածքը գոյանում ե այն բջիջների աճման հաշվին,

վորոնք պատում են կտրած անոթների և
նրանց զբարարատող շարակցական - հյուս-
վածքային բջիջները: Անոթների բջիջներից
կազմվում են նոր, շատ մանրիկ անոթներ,
վորոնք, իրար միանալով, կազմում են անոթ-
ների նոր ցանց՝ շարակցա-հյուսվածքային
բջիջներով շրջապատված: Նոր հյուսվածքը
աստիճանաբար պնդանում ե, և աճման մո-
մենտին, վերքի նուրբ փառի և մաշկային
շերտի յերեսին, նրա խորքից արդեն կազմ-
վում ե սպին:

Այն որից, յերբ վերքի առողջացման ժա-
մանակ առաջացած յերեսույթները հետազո-
տելու համար սկսեցին կիրառել միկրոսկոպը,
պարզվեց, վոր առողջացման ընթացքը, ըստ
իր եյության, նույնն ե, ինչ վոր և վերեւում
հիշատակված տարբեր տեսակի վերքերինը.
զանազանությունը միայն նոր կազմված
հյուսվածքների քանակությունն ե:

Բոլոր հյուսվածքները և որգանները նույն
արագությամբ չեն առողջանում: Այսպես,
վոսկը վերքն առողջանում ե 6 — 7 շա-
բաթվա ընթացքում, այնինչ մաշկի ու մկան-
ների վերքերը 7 որում են լավանում: Առող-
ջացման տեսողությունը կախում ունի նաև
հասակից: Մարդ վորքան յերիտասարդ ե,

այնքան արագ ե ընթանում վերքի առողջա-
ցում: Մանուկների մոտ վոսկը վերքերը
կարող են լավանալ 2 — 3 շաբաթում: Վերքի
տեղում մեծ մասամբ սպի յե գոյանում,
այսինքն մի հյուսվածք, վոր նման չե այն
հյուսվածքին, վորից բաղկացած եր վիրա-
վորված բնագավառը կամ որգանը: Յերեմին,
յերբ որգանում (լյարդում) սպին այդպես
զարգանում ե, որգանի մնացյալ մասն աճում-
մեծանում ե ու այդպիսով լրացվում ե պա-
կասող հյուսվածքը: Յերբ կան յերկու որ-
գաններ, և սպին զարգանում ե միայն նրան-
ցից մեկում, ապա յերկրորդ որգանն աճե-
լով լրացնում ե վնասված որգանի աշխա-
տանքը: Վերը տեղում գոյացած սպին յեր-
բեմն մարմնի առանձին մասերի ծովածք և
այլանդակում ե առաջացնում:

ՎԵՐՔԵՐԻ ԲՈՒԺՈՒՄԸ

Վերոհիշյալներից պարզ ե, վոր յուրաքան-
չյուր վերք մեծ վտանգ ե սպառնում: Ուս-
տի ինչ վերք ել վոր լինի, մարդ պետք ե
անմիջապես համապատասխան բժշկության
յենթարկվի: Վերը հետագա ընթացքը կախ-
ված ե նման դեպքերում ժամանակին

ցույց արված նախնական ձեռնհաս ոգնությունից:

Յերբ հիվանդին ոպերացիա յեն անում, բժիշկ՝ խիրուրգը ոպերացիոն վերք ե բաց անում: Հարկավոր ե, վոր այդ վերքը լավանա: Խիրուրգները շատ մեծ ուշազրությամբ հոգ են տանում, վոր այդպիսի վերքերը շուտով լավանան (6 — 7 որում): Դրա համար, յերբ այդ հնարավոր ե, ոպերացիոն վերքերը շերտ առ շերտ պինդ կերպով կարվում են. 7 որից կարերը քանդվում են, վորովհետև այդ ժամանակ վերքը բավական պինդ սպիռվ ե ծածկված լինում: Այսպիսի արդյունքը հնարավոր ե նրա համար, վոր գործադրվել ե վարակազրկման այն բոլոր միջոցները, վորոնք նկարագրված են վերևում և համարյա միշտ նախապահպանում են վերքը վարակումից:


Այսպես չե պատահաբար ստացված վերքերի ընթացքը: Պատահական վերք ստացած հիվանդը խիրուրգիական մաքրության պայմաններից հեռու յե գտնվում: Ահա ինչու ամենից առաջ ինքը՝ վիրավորվածը պետք ե հոգ տանի պահպանելու իր վերքը, վոր նա շփում չունենա վոչ մի բանի հետ, յեթե ի հարկե գիտակցությունը չի կորցրել: Նույն-

պիսի հոգատարություն են ցուցաբերելու նաև, նրանք, վորոնք վիրավորյալին ոգնություն են հասցնում:

Հագուստը, ճերմակեղենը, թաշկինակը — այս բոլոր առարկաներն ել վերքի վրա դըրվելով, կարող են թարախածին միկրոբների մեծ կամ փոքր բույն հանդիսանալ: Այս պետք ե ասել գլխավորապես թաշկինակների մասին: Մինչեւ անգամ յեթե թաշկինակը վոչ մի անգամ չի ոգտագործված, միենույնն ե՝ նա վանգավոր ե, վորովհետև զրպան դրվելուն պես նա ծածկվում ե մեծ քանակությամբ միկրոբներով, վորոնք գոյացել եյին դրանից առաջ զրպանում յեղած և ոգտագործված թաշկինակում ու մնացել եյին այնտեղ: Ուստի, յեթե արյունհօսությունը շատ քիչ ե, ավելի լավ կլինի վերքը չկապել, չփաթաթել, այլ հիվանդին տանել բժիշկի կամ բժողի (բժշկի ոգնականի) մոտ, վորպեսզի նա կապի վերքը: Յեթե վորևէ պատճառով այդ անկարելի յե, այդ գեպքում վերքի շըշապատի մաշկին յոդ քսել ու վարակագերծ արված մարլայով և բամբակով կամ նույնափիսի բինտով ու բամբակով կապել վերքը:


Արտադրության մեջ և դաշտային աշխատանքների ժամանակ այս անելու համար

հարկավոր և ունենալ անհատական ծրարներ,
վորոնք բացվում և կիրառվում են փաթթոց-
ների վրա գրված կանոնների համաձայն։ Որի-




Նկ. 11. Անհատական ծրարը և նրա կիրառման յեղանակը.

նակելի ծրարները և նրանց կիրառման յեղա-
նակը ցույց են տրված 11-րդ նկարի վրա։
Յեթե վերքը սաստիկ ե արյունհոսում,
անհրաժեշտ է կանգնեցնել այդ արյուն-



Նկ. 12. Արտերիաների այն կետերը, վոր պետք ե սեղմել
վակրիս արյանհոսուրյունը կանգնեցնելու համար。
1—գագաթից, 2—ծոծրակից, 3—յերեսից, 4 և 7 զլիկից և
վզից, 5 և 8—ուսից, 6—ծղիկից, 9—գաստակից, 10—մատ-
ներից, 11—ազդրից, 12—սրունքից, 13 և 14—վոտքի թա-
թից ու մատներից.

հոսությունը: Ի՞նքը վիրավորյալն ամեն անգամ չի կարող անել այդ: Ավելի հեշտ ե այդ տնել նրան ոգնողին: Դրա համար ամենից լավն ե, վիրավորվելուց հետո, հենց իսկույն մատներով սեղմել վերջավորությունը վիրավորված տեղից վերև, ինչպես անում են, սրտին մոտ, մորպեսդի հյուս-



Նկ. 13. Թեի աշտերիայի մատներով սեղմումը.

վածքներում սեղմվի այն արտերիան, վորն արյուն ե բերում այստեղ: 12. րդ նկարի վրա յերեսում են այն աեղերը, ուր կարելի յե արտերիաները մատներով սեղմել գուկորներին, փորպեսդի նրանից ցած գտնված վերքից արյուն չհոսի:

Վորովինետև յերբեմն հարկ ե լինում վիրավորվածին հեռու տեղ փոխադրել և այդ

դեպքում անհարմար ե բոլոր ժամանակ ձեռքերով սեղմել արտերիան կամ վերջավորությունը, ցանկովի յե ժգուտառվ (սեղման) պը կել այդ տեղը:

Ժգուտը պատրաստ վում ե փողաձև ուստի նից: Ռեալինը դնելուց առաջ նրան ձգում են և այդպես ձգված վիճա կում 2—3 անգամ պինդ պատում են վերջավորությունը վիրավորման տեղից վեր (տես նկար 14), առանց արանք թողնելու ուստինի պատաժների միջև:

Յերբեք չի կարելի ժգուտ դնել սրունքին կամ ծղիկին: Նույնիսկ նրանց վիրավորվելու դեպքում ժգուտը դրվում ե ազդրին կամ ուսին: Ժգուտը յերկու ժամից ավելի չպետք ե մնա: Այնուհետև նրան հարկավոր ե թուլացնել, ապա և նորից դնել ժգուտը, ինչ-




Նկ. 14. Ազդրը պատությունը՝ արյունոսությունը կանգնեցնելու համար.

պես այդ յերեսում են նկարներից, կարող են փոխարինվել թաշկինակավ, շապկի կտորով և այլն (տես նկար՝ 15):

Ժգուածը դնելուց հետո պետք են վերքը կապել, յեթե վիրավորվածին ձեռքի վրա

կամ կառքով համեմատաբար հեռու տարածություն են փոխադրելու: Յեթե ձեռքի տակ չլինի վարակազերծ արված վիրակապ, պետք են մեկին հանձնարարել, վոր հիվանդի շուռ գալու, հագուստով ծածկվելու և այլ դեպքերում պահպանի վերքը՝ շրջապատող առարկաներով կեղտուավելուց, մյուսին՝ շտապ պատրաստել վարակա-

զերծնյութեր՝ կաթսայի մեջ յեռացնելով բինտը, մարլայի կտորը, շապկի կտորները, մաքուրը, չգործածված թաշկինակը և այլն: Այսպես պատրաստված նյութեղենը կարելի յեթաց-թաց դնել վերքի վրա այնպես, վոր ձեռքը չդիպչի վերքին դրվող վիրակապի մակերեսին:



Նկ. 15. Ժգուածի (սեղմանի) փոխարինումը.

Ողնություն հասցնող անձը պետք են սապոնով մաքուր լվանած ձեռքերը, իսկ յեթե ձեռքի տակ ունենա սպիրու կամ ողի, նրանցով լվանած ձեռքերը: Յեթե յոդ ճարվի, լավ կլինի քսել ձեռներին, մանավանդ մատներին, վորովինետե գործիքներ չլինելու դեպքում պետք են նրանցով աշխատել:

Յեթե ողնությունը ցույց են տրվում ֆարբիկում, գործարանում, կոլխոզային դաշտում, այդ դեպքում, պրոֆ. Նապալկովի առաջարկությամբ, ձեռները սապոնով ու խոզանակով լվանալու փոխարեն պետք են 2—3 բովել ձեռքերը սրբել յերկու անձեռոցիկով՝ նախապես թրջելով նրանք ուտիչ կալի լուծույթում (1:2000): Դրանից հետո ձեռքերը սրբում են սպիրու և ապա անցնում են ողնության աշխատանքին: Ուժեղ արյունոսության դեպքում, մինչեւ հիվանդը ստանա հարկավոր ողնությունը, նա կարող են ունենալ զլխապտույտ, սրտախառնումք. այս յերեսույթները յերբեմն լինում են վախենալու հետևանքով: Այսպիսի վիրավորներին պետք են անմիջապես, բայց հանգիստ կերպով, տուանց վորևէ լրարանցման, պառկեցնել գոնե հատակին կամ գետնին, յերեխք չմոռանալով, վոր վերքը պետք են պահ-


պանվի շփում ունենալուց այն առարկաների հետ, վորոնք կարող են կեղաստել նրան, և մանավանդ հողի հետ շփումից, վորովհետեւ այս դեպքում շատ հեշտ ե վարակվել պրկախտով (ստուբյանակ):

Պրկախտը շատ ծանր հիվանդություն ե, վոր հանգում ե մահվան, յեթե նախազգուշական նպատակով հակապրկախտային շիճուկը ժամանակին չներսրակվի: Ուստի անհրաժեշտ ե ճշտիվ վորոշել՝ ուր ե տեղի ունեցել վիրավորումը, և հիվանդն արդյոք վերքով չի շփվել հողի հետ, արդյոք վիրավորումը հողով կեցառափած առարկայով (որինակ թին) չի յեղել: Այդ բարդություններից ազատ ե պահում շիճուկը, յեթե նա ներսրակվի պրկախտի առաջին նշանները յերկալուց առաջ: Պատերազմի ժամանակ ստացված վերքերն են, վոր հաճախակի բարդանում են պրկախտով:

Յեթե հիվանդի վերքը բարդացած ե վոսկրների կոտրվածքով, այդ դեպքում վիրավորված վերջավորության կոտրված տեղի համար պետք ե ստեղծել անշարժ դրություն և այնուհետև վիրավորվածին ուրիշ տեղ փոխադրել: Դրա համար պետք ե վիրակապը դնելուց հետո վերջավորությունը յեր-

կու կողմից յերիզանդել վորենե չծռկող առարկայի վրայից (տախտակներ, հաստ ձյուղեր, ստվար կարտոն, ձեռնափայտ, հավանոց, հրացան և այլն), մեջն առնելով կոտրված աեղից վեր ու վար գտնվող հոգերը: (Տես նկար 16):

Յերեմին առաջին ոգնությունը հասցնելու համար պետք ե լինում հանել հիվանդի հագուստն ու վոտնամանը: Նախ և առաջ հանում են առողջ վերջավորության հագուստը, ապա հիվանդ վերջավորությանը: Յեթե այդ անելն անկարելի յե, պետք ե ճղել հագուստը, լավ կլինի իհարկե կարերի ուղղությամբ: Յեթե անկարելի լինի կոշիկը հանել, նույնպես պետք ե ճղել այն կարի ուղղությամբ: Բարձր տեղից ցած վլորվելիս, փորին ուժգին հարված ստանալիս (յեղան, ձիու



Նկ. 16. Յերիզակապը սրունքի բաց կոտրվածքը դեպքում:

հարվածը), թեկուզ մաշկի վրա վերք ել չլիւնի, հիվանդն այնուամենայնիվ գունաթափ-վում ե, շրթումները գունատվում, կապում են, մատների ծայրերը դեղնում, ձեռքերը սառում, յերբեմն ել պաղ քրտինք ե գալիս վրան, առաջանում ե անտարբեր վերաբեր-մունք դեպի շուրջը գտնվողները։ Այսպիսի դեպքերում պետք ե յենթադրել, վոր ներքին որդաններից վորեւ մեկն ե վնասվել։ Հի-վանդին հարկավոր ե վորքան կարելի յեն հանգիստ պառկեցնել ու վրան ծածկել։ Յեթե բժիշկը հեռու չե, իսկույն պետք ե կանչել նրան կամ շուտափույթ ոգնու-թյանը։ Իսկ յեթե բժիշկն ու հիվանդա-նոցը հեռու յեն, այն ժամանակ հարկավոր ե առանց ըոպե կորցնելու (բայց և առանց իրարանցման) վիրավորվածին պառկեցնել և ըստ հնարավորության՝ հանգիստ կերպով փոխադրել նրան այնտեղ, Յեթե բժողը կամ բժքույթը հեռու չեն, նրանցից մեկնումեկը պետք ե ուղեկցեն այդպիսի հիվանդին, իրենց հետ ունենալով յոդ, շպրից (սրսկիչ)՝ քափուր, կոֆեյին, խմելու ջուր։

Յերբ վիրավորյալին բերին ամբուլատո-րիա կամ հիվանդանոց, նրան ցույց կարվի նույնպես առաջին ոգնությունը, բայց այս

ոգնությունը շատ տարբեր ե լինելու այն ոգնությունից, վոր կարող եր հասցնել նրան գիպվածի վալրում վոչ մասնագետը։ Համե-նայն դեպս այն մարդը, վորին յերբեկից գիճակվելու յե առաջին ոգնությունը հասց-նել վերքերի գեպը ում, պետք ե իմանա, վոր ինչքան ել աննշան լինի իր տփած ոգ-վոր կարող է դրանից նաև նությունը, հիվանդը կարող ե դրանից նաև մեծ վնաս ստանալ, և լնդհակառակը՝ այդ ոգնությունը կարող ե պահպանել վերքը հետապա, յերբեմն նույնիսկ մահացու բար-դություններից։ Տեղում ցույց տրված առա-ջին ոգնության բնույթից շատ անդամ կախ-ված ե լինում վիրավորման բարեհաջող յելքը։

Վիրավորյալին ամբուլատորիա կամ հի-վանդանոց տեղավորելուց հետո նրան տր-վելիք առաջին ոգնությունը կախված ե վեր-քի բնույթից։ Յեթե նա մաքուր ե, հարթ յեզրեր ունի և միանգամայն վստահություն ներշնչում, վոր տեղում, առաջին ոգնու-թյունը հասցնելիս, ինքեկցիա չի մացված, այդ դեպքում վերքը կարելի յե կարել, վո-րից հետո, 6—7 որում, հաջող լավացման դեպքում վերքի յերեսին պինդ, լավ սպի յե գոյանում։

Ճմլվածի, հրազենի և ուրիշ փոքր վերքերի դեպքում, ինչպես նաև կտրածի կեղտոտված վերքերի ժամանակ, յեթե վիրավորվելու մոմենտից անցել ե վոչ ավելի, քան 6 ժամ, կարելի յե փորձ անել կեղտոտված, պատահաբար գոյացած վերքը վերածել մաքուր ոպերացիոն վերքի: Դրա համար, առանց ժամանակ կորցնելու, խիրուրգն ամենայն դուշագործությամբ կտրում ե վերքի յեղբերը, պատերը և հատակը, վորպեսզի միկրոորգանիզմներին կեղտոտված մակերևույթից չփխադրի իր պատրաստած նոր մաքուր մակերևույթի վրա: Դրանից հետո նա կարող է վերքը կարել:

Յեթե վերքը կեղտոտ ե և վնասված տեղնել շատ լնդարձակ ե, այդ դեպքում առաջին ոգնության անելիքն ե՝ հեռացնել վերքը կեղտոտող բոլոր տեսանելի մասնիկները, կարել հյուսվածքի անզգայացած (մեռուկացած) ծվինները և վարակացերծ վիրակապ դնել: Յեթե վերքը բարդ տեսակից ե, կարող ե անհրաժեշտ լինել ուղղել կուրած վոսկը ների դիրքը, կարել ներփերը և ջլաթելերը:

Վերոհյալ բոլոր գեպերում վերքի մաշկի շուրջը յոդ են քսում և վերքը ծածկում են վարակագերծ ճերմակեղենով: Այն բոլոր

դեպքերում, յերբ կասկած կա, վոր վերքը շփում ե ունեցել հողի հետ, հակապրկախտային (ստոլբնյակ) շիճուկ ե ներարկվում: Յեթե վերքը գտնվում ե մարմնի մազոտ մասերում, վերքի շրջապատի մազերն անպատճառ ածիլվում են: Հիվանդին բերելուց հետո ժգուար (սեղմանը) հանում են և արյունահոսությունը կանգնեցնում են՝ ժամանակավորի տեղ՝ մայուն կերպով: Յեթե կասկած վորի տեղ՝ մայուն կերպով: Վերքի վարդի անդամներին որդաններից վորեե մեկն ե վիրավորված, այդ դեպքում անմըջապես ոպերացիա յեն անում:

Կանոնն այն ե, վոր վիրավորյալին առաջին ոգնությունը ցույց տրվելուց հետո, նրան հանգիստ պառկեցնում են և հատկացնում են համապատասխան սնունդ՝ որդանիզմի ուժն ավելացնելու համար:

Յերբեմն վիրավորյալի ընդհանուր ծանր դրությունը (մանավանդ յերբ վնասվածքները մեծ են) թելադրում ե հետ կենալ ոպերացիայից առաջին ժամերը, մինչև հիվանդը հասնի իր նորմալ վիճակին, յերբ ոպերացիան կարող ե ավելի լավ արդյունք ունենալ: Մեծ քանակությամբ արյուն կորցնելու դեպքում, սուր սակավարյունության հետեւանքով, կառող ե պետք լինել արյան փոխներարկում

կատարել թե ոպերացիայի ժամանակ և թե
նրանից հետո:

Ակողջապահության որգաններն արդեն
շատ բան են արել ապահովելու համար այն
ողնությունը, վոր պետք ե հասցվի ֆաբրիկ-
ներում, գործարաններում, շախտերում, հան-
քահորերում և կոլվսոզներում վիրավորյալ-
ներին: Վերքի գեպքում առաջին ողնությունը
կազմակերպողը կենցաղում է, յուրաքանչյուր
ընտանիքում պետք ե լինի ամեն մի քաղա-
քացի: Դրա համար անհրաժեշտ ե, վոր ա-
մեն մարդ իմանա նախնական գիտելիքներն
այն մասին, թե ինչ վտանգ են սպառնում
մարդու որգանիզմին վիրավորումները, ինչ-
պես խուսափել բարդություններից և ինչ-
պես հասցնել առաջին ողնությունը վիրա-
վորման գեպքում:



ԸՆԿ. ԸՆԹԵՐՑՈՂ,

Հայտնիր քա կարծիքն այս գրքի մասին հետեւյալ հասցեյով.

Гор. Ростов-Дон, Буденновский пр.,
№ 30, Азово-черноморское Краевое
Книгоиздательство, армянская секция.

Նամակները կարելի յեւ ուղարկել առանց
համակադրութիւնի:

«Ազգային գրադարան»



NL0279468

Цена 45 коп.
ԳԻՆԵ 45 ԿՈՊ.

№ 242

3979

На армянском языке

ДОЦЕНТ А. С. БРОДСКИЙ

**РАНЫ И ПЕРВАЯ ПОМОЩЬ
ПРИ НИХ**

**АЗОВО-ЧЕРНОМОРСКОЕ
КРАЕВОЕ КНИГОИЗДАТЕЛЬСТВО**
Ростов н-Д Буденновский пр. № 30

ԳՐԱԴԱՐԱՆ
Թումանյան, Մոսկվակայա, № 53
ԳՐԱԿԱՆՈՒՆ (ԿԱԿՈՑԵՆՏՐ)